

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ²

Հենվելով աշխարհագրական/ռազմավարական դիրքի և զարգացող ռազմական կարողությունների վրա՝ Թուրքիան ձգտում է դիրքավորվել որպես իսլամական աշխարհի առաջնորդ: Նախագահ Ռ. Թ. Էրդողանի օրոք այդ երկիրը վարում է ինքնավստահ արտաքին քաղաքականություն՝ ներգրավվելով տարածաշրջանային հակամարտությունների մեջ, ամրապնդելով կապերը մահմեդական մեծամասնություն ունեցող երկրների հետ՝ այդ թվում օգտագործելով նաև կրոնական դիվանագիտությունը: Իր բազմակողմանի և բազմաշերտ արտաքին քաղաքականության շրջանակներում Անկարան հետաքրքրություն է ցուցաբերում նաև միջուկային տեխնոլոգիաների նկատմամբ՝ առաջացնելով կասկածներ կամ ենթադրություններ միջուկային զենքի հետ կապված նրա երկարաժամկետ հավակնությունների վերաբերյալ:

Հիշյալ թեզը հիմնավորող ուղիղ ապացույցների բացակայության պարագայում կարող ենք, այնուամենայնիվ, արձանագրել որոշ սիմպտոմատիկ **նշաններ**, որոնք կասկած են հարուցում թուրքական քաղաքական-պետական վերնախավի մոտ միջուկային հավակնությունների առկայության վերաբերյալ: Դրանք են՝

1. **Քալիստիկ հրթիռների մշակումը.** Թուրքիան ներդրումներ է կատարում «ավելորդ» հեռահարություն ունեցող հրթիռների ստեղծման տեխնոլոգիայի մեջ, որը կարևոր բաղադրիչ է միջուկային զենքի ծրագրի համար³:

2. **Միջուկային ենթակառուցվածքների ընդլայնումը.** Թուրքիայում տասնամյակներ ի վեր հիմնադրվել են գիտելիքահեն ակադեմիական կառույցներ, որոնք ի զորու են միջուկային խնդիրների իրականացման համար ապահովել մասնագիտական կադրեր, ինչի

¹ Արևելագետ, թուրքագետ: 2008–2019 թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամում՝ որպես Հայագիտական կենտրոնի ղեկավար, 2014–2021 թթ.-ին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն»-ի գիտաշխատող: 2019–2021 թթ. աշխատել է ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վերլուծական ծառայության» բաժնում՝ որպես ավագ փորձագետ: 2021–2022 թթ. «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի «Գիտահետազոտական աշխատանքների և միջազգային կապերի բաժնի» գլխավոր արխիվագետ: 100-ից ավելի գիտավերլուծական հոդվածների և 12 կոլեկտիվ մենագրության հեղինակ է:

² Հոդվածը խմբագրություն է հանձնվել 26.01.2025 թ.:

³ *Մանրամասն տես*, Սիմավորյան, Ա. (2025). Թուրքիայի բալիստիկ հրթիռների ծրագիրը որպես տարածաշրջանային մարտահրավեր. ԱՌՎԱԿ վերլուծական կենտրոն, <https://shorturl.at/H5lhd> (բեռնման օրը՝ 15.02.2025):

արդյունքում ներկայումս «Թուրքիայում առկա են կարողությունների և ենթակառուցվածքների կրիտիկական զանգվածի կուտակում և գիտատեխնիկական զարգացման բավարար մակարդակ՝ ձեռնամուխ լինելու սեփական ապոմային կարողությունների ստեղծմանը»⁴: Չնայած նրան, որ Թուրքիան զարգացրել է միջուկային էներգիայի հետ կապված ենթակառուցվածքները և պաշտոնապես հավատարիմ է մնում դրա խաղաղ նպատակներով օգտագործմանը, միջուկային ենթակառուցվածքների ընդլայնումը կարող է ծածկույթ լինել զենքի հետ կապված հետազոտությունների համար:

3. Միջուկային խաղաղ օգտագործման ծրագիրը: Թուրքիայի միջուկային խաղաղ օգտագործման ծրագրերը բավարար հիմք են տեխնոլոգիաների ձևավորման, այդ թվում՝ արտադրական նոր տեխնոլոգիաների ուսումնասիրության ու զարգացման, տեխնիկական/տեխնոլոգիական հնարավորությունների ընդլայնման, ինչպես նաև արդյունաբերական ոլորտների զարգացման և այլնի համար: *Միջուկային խաղաղ օգտագործման ծրագրի* շրջանակներում ռուսաստանյան «Ռոսատոմ»-ի հետ ակնկալվում է Աբքույու ատոմակայանի կառուցումը, որի առաջին էներգաբլոկը կշահագործվի 2025 թ. ամռանը: Առկա են այլ երկրների հետ նոր ատոմակայաններ (Սինոպում և Իղնեադայում) կառուցելու լրացուցիչ ծրագրեր, ինչը նաև հուշում է Անկարայի էներգետիկ անկախության ձգտելու մասին:

Այնուամենայնիվ, միջուկային էներգիան տրամադրում է նաև երկակի օգտագործման տեխնոլոգիա, որը կարող է օգտագործվել զենքի մշակման համար: Թուրքիան ունի միջուկային հետազոտությունների համար նախատեսված փորձարարական ռեակտորներ և պլուտոնիումի հետ կապված փորձագիտություն, որոնք առանցքային նշանակություն ունեն միջուկային զենքի ստեղծման համար:

Եվ ի վերջո՝ **Թուրքիայի և Պակիստանի միջև ամուր կապերն** են: Երկու երկրները երկար ժամանակ է պահպանում են սերտ հարաբերություններ, որոնք ավելի արտահայտիչ դարձան ԱԶԿ-ի իշխանության շրջանում: Տարիների ընթացքում այդ համագործակցությունը ընդլայնվել է տարբեր, ներառյալ՝ պաշտպանական և ռազմական տեխնոլոգիաների ոլորտներում, ինչն առայսօր էլ շարունակվում է⁵: Մասնավորապես, 2025 թ. փետրվարի 13-ին Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանն ու Պակիստանի վարչապետ Շ. Շարիֆը Իսլամաբադում կայացած Բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհրդի 7-րդ նիստից հետո հաստատեցին «*Ռազմավարական գործընկերության*

⁴ Արա Մարջանյան, Միջուկային Թուրքիա, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 4, 2012, էջ 13:

⁵ Սիմավոյան, Ա. (2024). Թուրքիա-Պակիստան համագործակցությունը ռազմատեխնիկական ոլորտում. <https://surl.li/iicxct> (բեռնման օրը՝ 15.02.2025):

խորացման, բազմազանեցման և հաստատությունացման մասին» հռչակագիրը: Կողմերը ստորագրել են 24 համաձայնագիր, այդ թվում՝ պաշտպանության ոլորտում:

Ինչպես և սպասվում էր, պաշտպանական համագործակցության շրջանակներում նախատեսվում է էլեկտրոնային պատերազմի ոլորտում տեխնոլոգիաների համատեղ մշակում և փոխանակում, նաև ռազմական բժշկության ոլորտի մասնագետների վերապատրաստում: Բացի այդ, փոխըմբռնման հուշագիր ստորագրվեց *Թուրքիայի օդափեղեղերական արդյունաբերության (TAI) և Պակիստանի ռազմածովային հեղափոխությունների և զարգացման ինստիտուտի (NRDI) միջև*: Կողմերը նաև հայտարարեցին 5-րդ սերնդի KAAN կործանիչների արտադրության համատեղ գործարան ստեղծելու մասին: Կարճ ասած, երկու երկրները ամրապնդում են իրենց ռազմավարական գործընկերությունը, և ոչ այնքան անսպասելի՝ համատեղ զարգացնելու են իրենց պաշտպանական կարողությունները:

Ինչևէ, գործընկերների միջև բարձր մակարդակի հանդիպումներից հետո միջազգային ԶԼՄ-ներին և փորձագիտական շրջանակներին ավելի շատ մտահոգում է այն մտայնությունը, որ Իսլամաբադին մերձենալու Անկարայի հեռահար նպատակն իրականում միջուկային զենքի տեխնոլոգիաներ ձեռք բերելն է այդ երկրից: Երկու երկրներն էլ սպասելիորեն ոչ պաշտոնական մակարդակով հերքում են այդ «մեղադրանքները»՝ բնութագրելով նման մոտեցումները որպես «դավադրապաշտական թեզերից» բխող խոսույթներ⁶: Այնուամենայնիվ, առկա միջազգային արձագանքներն ու ենթադրություններն առ այն, որ Անկարան, ի վերջո, կարող է միջուկային զենք ստեղծել, այնքան էլ հիմնագուրկ չեն:

Թուրք փորձագետների կարծիքով իրենց երկիրը գտնվում է ՆԱՏՕ-ի միջուկային հովանոցի ներքո, ուստի, դրանից ելնելով, Անկարան չի ձգտում միջուկային զենքի ծրագիր կազմել, սակայն մյուս կողմից՝ նախագահ Ռ. Էրդողանը հաճախակի է հրապարակային հայտարարություններ անում Անկարայի՝ միջուկային զենք մշակելու կամ այն ձեռք բերելու իրավունքի մասին: Օրինակ, այդպիսի մի հայտարարություն Էրդողանը հնչեցրել է 2019 թվականին. «Որոշ երկրներ ունեն միջուկային հրթիռներ, բայց ես դրանք չեմ կարող ունենալ: Սա, ես չեմ կարող ընդունել»⁷:

⁶ Տես, օրինակ, La Turquie et le Pakistan renforcent leurs liens de défense: les Occidentaux et les Indiens s'emportent contre la prolifération nucléaire. *L'Institut de Vision Stratégique (SVI)*. 03.31.2021, <https://thesvi.org/turkey-pakistan-increasing-defense-ties-western-and-indian-rant-about-nuclear-proliferation/> (ընդունման օրը՝ 15.02.2025); Türkler nükleer silah yapıyor bilgin olsun! Yeni Safak, 06.01.2021, <https://www.yenisafak.com/gundem/turkler-nukleer-silah-yapiyor-bilgin-olsun-3593062> (ընդունման օրը՝ 15.02.2025):

⁷ Erdoğan: Birilerinin elinde nükleer başlıklı füze var, ama benim elimde olmasın, ben bunu kabul etmiyorum. BBC.com (թուրք.), 05.09.2019, <https://www.bbc.com/turkce/haberler-turkiye-49589110> (ընդունման օրը՝ 18.02.2025).

միջազգային գործակալության (ԱԷՄԳ) կանոնակարգերի հետ: Այս առումով, միջուկային ոլորտում ցանկացած տեղաշարժ չի կարող երկրի համար խորը հետևանքներ չունենալ թե՛ տնտեսական, թե՛ աշխարհաքաղաքական իմաստներով:

Նախ և առաջ, այն կհանգեցնի *տնտեսական պատժամիջոցների*, իսկ Թուրքիայի այսօրվա փխրուն տնտեսությունը (*հաշվի առնելով՝ գործազրկության բարձր մակարդակը, գնաճը, լիրայի արժեզրկումը և, ընդհանրապես, տնտեսական անկայուն վիճակը*) չի կարող իրեն թույլ տալ հայտնվելու Արևմուտքի պատժամիջոցների ներքո, որոնք հնարավոր է նման լինեն Իրանի և Հյուսիսային Կորեային դեմ կիրառվող պատժամիջոցներին:

Երկրորդ՝ Մերձավոր Արևելքում կսկսվի միջուկային սպառազինությունների մրցավազք, եթե ի հայտ գան անժխտելի փաստեր, որ Անկարան ձգտում է ձեռք բերել կամ մշակել միջուկային զենքի հետ կապված ծրագիր: Թուրքական նման ծրագիրը իսկական մարտահրավեր է լինելու Իրանի և Սաուդյան Արաբիայի համար: **Մի կողմից** այն կարող է խրախուսել Սաուդյան Արաբիային միջուկային զենք ստեղծել, մյուս կողմից՝ սադրել Իրանին արմատապես վերանայելու իր միջուկային քաղաքականությունը: Սաուդյան Արաբիայի դեպքում ավելորդ չէ նշել նաև, որ այդ երկրի ղեկավարությունը ժամանակին հայտարարել է, որ պատրաստ է ձեռք բերել միջուկային զենք կամ, առնվազն, ընդլայնել իր միջուկային էներգետիկ ենթակառուցվածքը, եթե իրանական միջուկային ծրագրի զարգացումը պատշաճ կերպով չսահմանափակվի: Իր այդ դիրքորոշումն Էր-Ռիադն ամրագրել է կոնկրետ քայլերով՝ մասնակցելով Պակիստանի միջուկային ծրագրին¹¹ և զարկ տալով Չինաստանի հետ սեփական բալիստիկ հրթիռների ստեղծման լայնածավալ աշխատանքի մեկնարկին¹²:

Ի հակադրություն Իրանի ու Սաուդյան Արաբիայի, որոնք Թուրքիայի միջուկային ծրագրերի իրականացմանը հակազդելու լուրջ լծակներ չունեն բացի մրցակցությունից, տարածաշրջանում **միջուկային ոլորտում զարգացումները կանխելու** քաղաքականության մեծ փորձ ունի Իսրայելը, որը Մերձավոր Արևելքում միջուկային զենքի տարածումը համարում է իր գոյապահպանությանն ուղղված **սպառնալիք: Հիշեցնենք, որ Իսրայելը «Begin Doctrine»-ի շրջանակներում** նախկինում կանխարգելիչ հարվածներ է հասցրել Իրաքի (1981 թ.) և Սիրիայի (2007 թ.) միջուկային օբյեկտներին և *Stuxnet* համակարգչային վիրուսի միջոցով կաթվածահար արել նաև Իրանի միջուկային ծրագիրը:

¹¹ Mark Urban. Saudi nuclear weapons 'on order' from Pakistan. BBC.com, 06.11.2013, <https://www.bbc.com/news/world-middle-east-24823846> (բեռնման օրը՝ 22.02.2025).

¹² Phil Mattingly, Zachary Cohen and Jeremy Herb Exclusive: US intel shows Saudi Arabia escalated its missile program with help from China, CNN.com, 05.05.2019, <https://edition.cnn.com/2019/06/05/politics/us-intelligence-saudi-arabia-ballistic-missile-china/index.html> (բեռնման օրը՝ 22.02.2025).

Դժվար է կանխատեսել, թե ինչպես կարձագանքի Իսրայելը, եթե Թուրքիան փորձի միջուկային զենք ստեղծել: Ենթադրում ենք, որ դա կանխելու համար Թել Ավիվը կարող է դիմել **դիվանագիտական, հետախուզական և, նույնիսկ, ուժային միջոցների**: Բայց, հաշվի առնելով Թուրքիայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին, ռազմական գործողությունը կլինի **վերջին միջոցը**, որին կդիմի Իսրայելը: Ավելի հավանական է Իսրայելի կողմից **գաղտնի գործողությունների իրականացումը**, այդ թվում՝ **կիբերհարձակումների** տեսքով: Հնարավոր ծայրահեղ միջոցներին դիմելուց զատ, որպես սցենար, **Իսրայելը հնարավոր է ճնշում բանեցնի ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի վրա՝ Թուրքիայի նկատմամբ տնտեսական պատժամիջոցներ և դիվանագիտական մեկուսացում կիրառելու համար կամ առաջարկի Ատոմային էներգիայի միջազգային գործակալությանը (ԱԷՄԳ), որպեսզի վերջինս ուժեղացնի վերահսկողությունը Թուրքիայի միջուկային նախաձեռնությունների նկատմամբ:**

Ինչևէ, ժամանակաշրջանից և տվյալ պահին գոյություն ունեցող ռազմաքաղաքական իրադրությունից է նաև կախված, թե ինչպիսի քաղաքականություն կորդեգրեն Թուրքիայի նկատմամբ համաշխարհային ուժային կենտրոնները և տարածաշրջանի տերությունները, եթե Անկարան պաշտոնապես որոշի ընթանալ միջուկային սպառազինություն ձեռք բերելու ուղիով:

Ամփոփելով նշենք, որ Անկարայի միջուկային ռումբի ծրագիրը մնում է ենթադրությունների տիրույթում, սակայն, տեխնոլոգիական առաջընթացը, Էրդոդանի հռետորաբանությունը և Իսլամաբադ-Անկարա ռազմաքաղաքական սերտ հարաբերությունները հուշում են, որ Անկարան կարող է միջուկային զենք ձեռք բերել: Ինչպես ժամանակին Պակիստանի նախագահ Զուլֆիքար Ալի Բհուտոն էր մի առիթով հայտարարել. Պակիստանը *«խոսք կամ տերև կուտրի, նույնիսկ սովից կտառապի, բայց կստեղծի միջուկային ռումբ»*: Պատրաստ է, արդյո՞ք, Էրդոդանը *«խոսք ուտել»*, միայն թե հագուրդ տա իր ցանկություններին. Եթե այո, ապա դա աշխարհաքաղաքական մեծ գին կարժենա ոչ միայն իր ավտորիտար կառավարության, այլև ողջ Թուրքիայի համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Սիմավորյան Ա. (2025). Թուրքիայի բալիստիկ հրթիռների ծրագիրը որպես տարածաշրջանային մարտահրավեր, *ԱՌՎԱԿ վերլուծական կենտրոն*, <https://shorturl.at/H5lh>
2. Սիմավորյան Ա. (2024). Թուրքիա-Պակիստան համագործակցությունը ռազմատեխնիկական ոլորտում, *ԱՌՎԱԿ վերլուծական կենտրոն*, <https://surl.li/iicxct>
3. Մարջանյան Ա. (2012). Միջուկային Թուրքիա, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 4, 2012, էջ 13:

4. Մարջանյան Ա. (2025). Իրանը՝ Սկիզբայի և Քարիբդիսի միջև, *ԱՌՎԱԿ վերլուծական կենտրոն*, <https://shorturl.at/ySfkN>
5. La Turquie et le Pakistan renforcent leurs liens de défense: les Occidentaux et les Indiens s'emportent contre la prolifération nucléaire, 03.31.2021, *L'Institut de Vision Stratégique (SVI)*. <https://thesvi.org/turkey-pakistan-increasing-defense-ties-western-and-indian-rant-about-nuclear-proliferation/>
6. Türkler nükleer silah yapıyor bilgin olsun! Yeni Safak, 06.01.2021. <https://www.yenisafak.com/gundem/turkler-nukleer-silah-yapiyor-bilgin-olsun-3593062>
7. Erdoğan: Birilerinin elinde nükleer başlıklı füze var, ama benim elimde olmasın, ben bunu kabul etmiyorum. BBC.com, 05.09.2019, <https://www.bbc.com/turkce/haberler-turkiye-49589110>
8. Nuclear Power in Pakistan. 04.02.2025. <https://world-nuclear.org/information-library/country-profiles/countries-o-s/pakistan>
9. This Report Presents the Turkish Press Summary under Three Themes 08.12.2005. https://wikileaks.org/plusd/cables/05ANKARA7216_a.html
10. Mark Urban. Saudi nuclear weapons 'on order' from Pakistan. BBC.com, 06.11.2013, <https://www.bbc.com/news/world-middle-east-24823846>
11. Phil Mattingly, Zachary Cohen and Jeremy Herb. (2019). Exclusive: US intel shows Saudi Arabia escalated its missile program with help from China, CNN.com, 06.05.2019, <https://edition.cnn.com/2019/06/05/politics/us-intelligence-saudi-arabia-ballistic-missile-china/index.html>